Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
սեպտեմբերի 25-ի N 1084 - Ն որոշման

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԻՆԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ ԿԱԶՄԵԼՈՒ ԵՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Սույն կարգով կարգավորվում են պաշտոնական ինկորպորացիայի ենթարկված նորմատիվ իրավական ակտերի էլեկտրոնային ժողովածու (այսուհետ՝ էլեկտրոնային ժողովածու) կազմելու և տրամադրելու կարգի և ժամկետների հետ կապված հարաբերությունները:

2. Էլեկտրոնային ժողովածուն պաշտոնական ինկորպորացիայի ենթարկված նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև այդ ակտերի հետ կապված այլ իրավական ակտերի համակարգված, որոնողական համակարգով հագեցած ժողովածու է, որի ներկայացումն իրականացվում է http://www.arlis.am/ ինտերնետային կայքում:

3. Պաշտոնական ինկորպորացիայի ենթարկված նորմատիվ իրավական ակտերը ներկայացվում են «ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԻՆԿՈՐՊՈՐԱՑԻԱ» նշումով:

4. Պաշտոնական ինկորպորացիայի են ենթարկվում 2015 թվականի մարտի 1-ից հետո ընդունված և փոփոխություններ կրած նորմատիվ իրավական ակտերը:

5. Մինչև 2015 թվականի մարտի 1-ը ընդունված և փոփոխությունների ենթարկված, ինչպես նաև 2015 թվականի մարտի 1-ից փոփոխված նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական ինկորպորացիաներով էլեկտրոնային ժողովածուի համալրման աշխատանքներն իրականացվում են հետևյալ փուլերով՝

1) պաշտոնական սկզբնաղբյուր ունեցող նորմատիվ իրավական ակտերով համալրում.

2) պաշտոնական սկզբնաղբյուր չունեցող կամ չպահպանված նորմատիվ իրավական ակտերով համալրում:

6. Էլեկտրոնային ժողովածուի համալրման հաջորդականություն է սահմանվում նորմատիվ իրավական ակտերի ընդունման և ուժի մեջ մտնելու ժամկետները՝ սկսած 2015 թվականի մարտի 1-ից՝ նվազման կարգով:

7. Սույն կարգի իմաստով պաշտոնական սկզբնաղբյուր ունեցող նորմատիվ իրավական ակտերն են՝ 1997 թվականի հունվարի 1-ից հետո «ՀՀ պաշտոնական տեղեկագիր» և «ՀՀ գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի տեղեկագիր» պարբերականներում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հրապարակված նորմատիվ իրավական ակտերը:

8. Սույն կարգի իմաստով պաշտոնական սկզբնաղբյուր չունեցող կամ չպահպանված նորմատիվ իրավական ակտերն են՝ մինչև 1997 թվականի հունվարի 1-ը ընդունված և ընդունման պահին սահմանված կարգով հրապարակված նորմատիվ իրավական ակտերը:

9. Պաշտոնական ինկորպորացիայի ենթարկված նորմատիվ իրավական ակտերի էլեկտրոնային ժողովածուի համալրման աշխատանքների ավարտման ժամկետը 2027 թվականի դեկտեմբերի 31-ն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ